«ԶԱՆԳԵԶՈՒՐ» ԿԵՆՍՈԼՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ-Ի 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

«Զանգեզուր» Կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ը ՀՀ կառավարության 2013թ. դեկտեմբերի 19-ի թիվ 1465-Ն և 2016թ. սեպտեմբերի 8-ի թիվ 929-Ն որոշումների համաձայն իրականացրել է աշխատանքներ 79038,8հա բնության հատուկ պահպանվող տարածքներում՝ որից

- «Շիկահող» մասնաճյուղ «Շիկահող» պետական արգելոց» տեղամաս– 12137.075հա
- «Սոսու պուրակ» պետական արգելավայր» տեղամաս– 64.2հա
- «Խուստուփ» պետական արգելավայր» տեղամաս- 6946.74հա
- «Զանգեզուր» մասնաճյուղ «Զանգեզուր» պետական արգելավայր» տեղամաս- 25711,5959հա
- «Սև Լիճ» պետական արգելավայր» տեղամաս– 240հա
- «Արևիք» մասնաճյուղ «Արևիք» ազգային պարկ» տեղամաս- 31211,19հա
- «Բողաքար» պետական արգելավայր» տեղամաս- 2728հա

1. Բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության գիտական ուսումնասիրության, հաշվառման, գույքագրման, մոնիթորինգի, բնության տարեգրության վարման միջոցառումների իրականացում

1.1 ՊՈԱԿ-ի տնօրինության տակ գտնվող բնության հատուկ պահպանվող տարածքներում ընդհանուր միջոցառումների իրականացում (79038.8 հա):

Աշխատանքներն իրականացվել են «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի 2025 թվականի աշխատանքային ծրագրի համաձայն:

ՊՈԱԿ-ի տնօրենի 2025 թվականի հոկտեմբերի 31-ի N 102-Ա հրամանի համաձայն ՊՈԱԿ-ի քաղաքացիական պաշտպանության 2024 թվականի պլան-ժամանակացույցում սահմանված կարգով կատարվել են համապատասխան փոփոխություններ և ներկայացվել ՀՀ ՆԳՆ ՓԾ Սյունիքի մարզային փրկարարական վարչություն:

1.2 Հրդեհային անվտանգության միջոցառումների իրականացում: Հակահրդեհային ճանապարհների ընթացիկ նորոգում:

ՇՄՆ նախարարի N/16.11/1708 հանձնարարականի հիման վրա հրդեհավտանգ ժամանակահատվածով պայմանավորված, հնարավոր հրդեհների առաջացումը կանխելու նպատակով ձեռնարկվել են գործուն միջոցներ և «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի գույքը բեվել է պատրաստի վիճակի:

1.3 Համագործակցություն տեղական և ինքնակառավարման մարմինների հետ՝ ներգրավելով նրանց ՊՈԱԿ-ի տնօրինության ԲՀՊ տարածքների միջոցառումների իրականացմանը:

2025 թվականի ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինների, հարակից համայնքների ղեկավարների և ՊՆ ղեկավարության հետ անց են կացվել քննարկում-զրույցներ՝ 125 անգամ:

1.4. Հարող բնակավայրերի բնակչության շրջաններում էկոլոգիական իրազեկություն, էկոդաստիարակութուն:

Ընդհանուր միջոցառումների, պատշաճ հսկողության, սիստեմատիկ ստուգայցերի, շրջկալների և հարակից համայնքների ազգաբնակչության հետ իրականացված հանդիպումների շնորհիվ, ապահովում ենք բնության հատուկ պահպանվող տարածքների կենսաբազմազանության պահպանությունը և բնականոն կայուն զարգացումը:

1.5 Ծառատնկման աշխատանքների իրականացում

2025 թվականի ընթացքում «Զանգեզուր կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի «Սոսու պուրակ» արգելավայրի տնկարանում աճեցված տնկիներով մարտի 30-ին ՀՀ ՊՆ N զորամասում իրականացվել է ծառատունկ: Տնկվել են 80 հատ կատալպա, 20 հատ սոսի և 155 հատ բարդի տեսակի ծառեր:

Տնկարանում աճեցվող տնկիներն օգտագործվել են ծառատնկման և անտառվերականգնման աշխատանքներում, մասնավորապես՝

- ՀՀ ՊՆ N զորամասին տրամադրվել է 45 տնկի,
- Կապանի թիվ 7 հիմնական դպրոցի հարակից տարածքում, տնկվել է 20 ծառ,
- «Արևիք» ազգային պարկի տարածքում իրականացվել են անտառվերականգնման աշխատանքներ, որոնց ընթացքում տնկվել է 200 ծառ:
- «Շիկահող» պետական արգելոցին հարակից Ծավ բնակավայրի համայնքային տարածքի կանաչապատման նպատակով կազմակերպվել է ծառատունկ, որին ներգրավվել էին Ծավի միջնակարգ դպրոցի աշակերտները: Տնկվել է 40 ծառ:

«Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրենի 2025 թվականի հոկտեմբերի 06-ի N90-Ա հրամանի համաձայն 2024 թվականին հաշվարկված 125 խմ թափուկ վառելափայտի և 2023 թվականի 37 խմ թափուկ վառելափայտի մնացորդի տրամադրում թույլատրվել է տրամադրել Մեղրի համայնքի Ալվանք, Կարճևան, Լեհվազ, Տաշտուն, Լիճք, Վարդանիձոր, Շվանիձոր, Վահրավար, Գուդեմնիս, Կուրիս և Նռնաձոր բնակավայրերում բնակվող ընտանիքներին մթերել ոչ արտադրական նպատակներով մինչև 8 խմ անվճար թափուկ վառելափայտ համապատասխան տոմսերի միջոցով: Հաշվարկված 162 խմ թափուկ վառելափայտից բաց թողնվել 102 խմ թափուկ վառեփայտ:

2. Գիտական և էկոտուրիզմի զարգացմանն ուղղված միջոցառումներ

2.1 Գիտահետազոտական միջոցառումների իրականացում

ա) կենսաբազմազանության մոնիտորինգի միջոցառումների իրականացման համար նախադրյալների ապահովում,

բ) ողնաշարավոր կենդանիների որոշ խմբերի հաշվառմանն ուղղված աշխատանքներ, ուսումնասիրություններ և ներկա վիճակի վերլուծության՝ (մուֆլոն, վայրի խոզ, եվրոպական այծյամ, բեզոարյան այծ, գորշ արջ, շնագայլ, գայլ, առաջավորսիական ընձառյուծ), ներառյալ բուսական տեսակների հաշվառմանն ուղղված աշխատանքներ,

գ) ԲՀՊ տարածքներում հանդիպող, բնադրվող չվող և նստակյաց թռչնատեսակների ուսումնասիրություններ:

«Բույսերի բազմազանության մշտադիտարկումը ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքներում» ծրագրի շրջանակում՝ ՇՄՆ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ում իրականացվել է աշխատակիցների մասնագիտական հմտությունների զարգացման և արդիականացման գործընթացը, որին, ՊՈԱԿ-ի տնօրեն Ա. Մկրտչյանի գլխավորությամբ, մասնակցել են գիտության, զբոսաշրջության և մոնիթորինգի մասնագետները: Ծրագրի բուն նպատակը մշտադիտարկման գործընթացի արդյունավետության բարձրացումն է, ՊՈԱԿ-ի մասնագետներին դաշտային աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ գործնական հմտությունների ու մշտադիտարկման մեթոդաբանության տեսական հիմքերի փոխանցման միջոցով: Ծրագրի փորձագետներ՝ Մ. Սարգսյանի և Ար. Էլբակյանի կողմից ներկայացվել են ծրագրի մանրամասները, ներառյալ՝ մշտադիտարկման մեթոդաբանությունը, ցուցիչ տեսակների նույնականացումն ու ՊՈԱԿ-ի ԲՀՊՏ-ներում տեղադրված փորձահրապարակները, յուրաքանչյուր պահպանվող տարածքի մշտադիտարկման համար ընտրված բուսատեսակները, դաշտային աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ գործիքակազմն, այդ թվում՝ կիրառվելիք Arcgis Survey 123 հավելվածը: Ծրագիրն իրականացվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության, ՀՀ ԳԱԱ Ա.Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի, Կովկասի բնության հիմնադրամի համագործակցության շրջանակում, վերջինիս ֆինանսավորմամբ և համակարգվում է ՀՀ ԳԱԱ Ա.Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի կողմից:

Վերոնշյալ ծրագրի շրջանակներում՝ տարվա ընթացքում ՊՈԱԿ-ի գիտության, մոնիթորինգի և զբոսաշրջության մասնագետների կողմից իրականացվել են 2024 թվականի ընթացքում ՀՀ ԳԱԱ Ա.Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի մասնագետների կողմից՝ ՇՄՆ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի հատուկ պահպանվող տարածքներում տեղադրված փորձահրապարակների ուսումնասիրություններ, մասնավորապես՝ «Շիկահող» պետական արգելոցում, «Զանգեզուր» արգելավայրում և «Արևիք» ազգային պարկում:

- **«Շիկահող» պետական արգելոցում** ուսումնասիրվել են.

Էկոհամակարգային փորձահրապարակներից՝ E1, E2, E3, E4, E5, E6, E7, E8, E9, E10, E11, E12, E13, E14, E15, E16, E17, E18, E20, E21:

E1, E2, E3, E4 փորձահրապարակներում կատարվել են վերականգնման աշխատանքներ:

E21 փորձահրապարակը Survey123 առցանց լրացման համակարգում բացակայում է, սակայն մեր կողմից իրականացված ուսումնասիրությունը լրացվել է թղթային տարբերակով, այդ իսկ պատճառով այն ուղարկում ենք կից:

E19-ը փորձահրապարակը կորսված է և վերականգնման ենթակա չէ՝ տեղադիրքի և տապալված ծառերի պատճառով:

Հազվագյուտ և անհետացող տեսակների փորձահրապարակներից՝ R1, R3, R6, R7, R10, R12: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ R5 փորձահրապարակը կորսված է՝ հակահրդեհային նշանակության ճանապարհի սպասարկման արդյունքում և վերականգնման ենթակա չէ:

Անհրաժեշտ է Survey123 առցանց լրացման համակարգում տարանջատել R5 և R7 փորձահրապարակները, լրացված տեղեկատվությունը համապատասխանում է R7 փորձահրապարակին:

Արգելոցի միակ **Ինվազիվ և էքսպանսիվ տեսակների փորձահրապարակը** I-1 վնասված է, իսկ ցուցիչ տեսակը՝ Կաթնափուշ գծավոր/Silybum marianum իսպառ բացակայում է թե՛ փորձահրապարակում, թե՛ հարակից տարածքում: Survey123 առցանց լրացման համակարգում չի լրացվել:

Անտառային էկոհամակարգերի վիճակի ցուցիչ տեսակների փորձահրապարակներից՝ F2, F4, F7, F9, F15, F16:

Վերոնշյալ որոշ փորձահրապարակներում կատարվել են վերականգնման աշխատանքներ: Ընդհանուր առմամբ՝ **«Շիկահող» պետական արգելոցում** ուսումնասիրվել է 35 փորձահրապարակ, որից 3-ը կորսված է: Սահմանային տեղադիրքով պայմանավորված որոշ փորձահրապարակներում արգելվել է իրականացնել դաշտային աշխատանքներ:

- **«Զանգեզուր» արգելավայրում** ուսումնասիրվել են.

Էկոհամակարգային փորձահրապարակներից՝ E30, E33, E34, E38: E27 փորձահրապարակը քարաթափման պատճառով կորսված է:

Արածեցման ազդեցության գնահատման փորձահրապարակներից՝ G9.A+ G9.B, G7.A+ G7.B, G8.A+ G8.B: Ծրագրում G7.B փորձահրապարակը ցանկապատվածն է, անհրաժեշտ է 2 G7.A-ից փոխել:

Հազվագյուտ և անհետացող տեսակների փորձահրապարակներից՝ R37:

Վերոնշյալ որոշ փորձահրապարակներում կատարվել են վերականգնման աշխատանքներ: Ընդհանուր առմամբ՝ **«Զանգեզուր» արգելավայրում** ուսումնասիրվել է 12 փորձահրապարակ, որից մեկը վերականգնման ենթակա չէ:

«Զանգեզուր» արգելավայրում, տեղադիրքով պայմանավորված, մյուս փորձահրապարակների ուսումնասիրության դաշտային աշխատանքները սահմանափակվել են ՊՆ կողմից:

- **«Արևիք» ազգային պարկում** ուսումնասիրվել են.

Էկոհամակարգային փորձահրապարակներից՝ E1, E2, E8, E4, E15, E18: E16 և E19 փորձահրապարակները կորսված են:

Արածեցման ազդեցության գնահատման փորձահրապարակներից՝ G20.A+ G20.B, G22.A+ G22.B, G23.A, G1.A+ G1.B: G23.B փորձահրապարակը բացակայում է:

Հազվագյուտ և անհետացող տեսակների փորձահրապարակներից՝ R12:

Վերոնշյալ որոշ փորձահրապարակներում կատարվել են վերականգնման աշխատանքներ: Ընդհանուր առմամբ՝ **«Արևիք» ազգային պարկում** ուսումնասիրվել է 17 փորձահրապարակ, որից 3-ը կորսված են:

«Շիկահող» պետական արգելոցում, «Զանգեզուր» արգելավայրում և «Արևիք» ազգային պարկում, աշխատակիցների անվտանգության նկատառումներից ելնելով և իրավիճակով պայմանավորված՝ տեղադրված որոշ փորձահրապարակներում չեն իրականացվել մշտադիտարկման աշխատանքներ:

Տարվա ընթացքում ՇՄՆ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի և Բնության համաշխարհային հիմնադրամի (WWF-Armenia) համագործակցության շրջանակում համատեղ իրականացվել են մշտադիտարկման աշխատանքներ, ինչպես նաև ֆոտոբռնիչ սարքերի ստուգում և նորերի տեղադրում՝ ՊՈԱԿ-ի կառավարման ներքո գտնվող բնության հատուկ պահպանվող տարածքներում: Ֆոտոբռնիչ սարքերի կողմից արձանագրվել են հետևյալ կենդանատեսակները՝ Գորշ արջ, Բեզոարյան այծ, Հնդկական վայրենակերպ, Եվրոպական այծյամ, Եվրոպակա լուսան, Սովորական աղվես, Գորշ գայլ, Վայրի խոզ և այլ տեսակներ:

«Զանգեզուր» արգելավայրում իրականացված մշտադիտարկման ընթացքում արձանագրվել է 17 առանձնյակից բաղկացած Հայկական մուֆլոնի խումբ: Դաշտային աշխատանքների ընթացքում նկատվել են նաև Բեզոարյան այծեր:

Տարվա ընթացքում պարբերաբար իրականացվել են շրջայցեր և ստուգայցեր «Շիկահող» և «Արևիք» մասնաճյուղերում, որոնց ընթացքում կատարվել են խոշոր կաթնասունների որոշ ներկայացուցիչների (Գորշ արջ, Եվրոպական այծյամ, Անտառակատու, Վայրի խոզ, Հնդկական մացառախոզ, Կովկասյան ընձառյուծ, Բեզոարյան այծ, Եվրոպական լուսան, Եղեգնակատու, Փորսուղ, Քարակզաքիս) տեսակային ուսումնասիրություններ, այդ թվում՝ դրանց բնակավայրերի, անտառային և լեռնային արահետների, միգրացիոն հատվածների, թողած հետքերի և ոտնահետքերի ուսումնասիրություններ:

Տարվա ընթացքում կատարվել են ԲՀՊՏ-ներում հանդիպող, բնադրվող, նստակյաց թռչնատեսակների ուսումնասիրություններ, որոնց ընթացքում արձանագրվել են նաև ՀՀ Կարմիր գրքում գրանցված տեսակներ՝ Սև փայտփոր, Միջերկրածովյան երաշտահավ, Սպիտակագլուխ անգղ, Գառնանգղ:

Ուսումնասիրությունների ընթացքում համապատասխան արահետներում և հատվածներում տեղադրվել են ֆոտոբռնիչ սարքավորումներ՝ տեսակների կատարած տեղաշարժը, առանձնյակներին և նրանց մոտ նկատվող խնդիրներն ուսումնասիրելու նպատակով:

Համապատասխան ժամանակահատվածում իրականացվել են ԶԿՀ մասնաճյուղերում հանդիպող, բնադրվող, չվող թռչնատեսակների տեսակային ուսումնասիրություններ, գարնանային վերադարձ կատարած տեսակներն արձանագրելու նպատակով: Ուսումնասիրությունների ընթացքում գարնանային վերադարձ է արձանագրվել հետևյալ տեսակների մոտ՝ Գարնանային գեղգեղիկ, Ծնկլտան գեղգեղիկ, Հոպոպ, Սևագլուխ շահրիկ, Անապատային մորեհավ, Սովորական կարմրատուտ, Երգող շահրիկ, Այծկիթ, Գյուղական ծիծեռնակ, Փոքր արտույտ, Մարգագետնային չքչքան:

ՊՈԱԿ-ի հատուկ պահպանվող տարածքներում ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի, Միջատաբանության և բնահողի կենդանաբանության լաբորատորիայի մասնագետները իրականացրել են մշտադիտարկման և վնասակար միջատների նմուշառման աշխատանքներ: Ուսումնասիրությունները կատարվել են ներքոնշյալ ծրագրերի շրջանակում՝

- «Կովկասի բնության հիմնադրամի աջակցությամբ իրականացվող միջատների մոնիթորինգի ծրագիր»,

- «Հայաստանում ծոպաթևավորների ֆաունան և էկոլոգիական առանձնահատկությունները»,
- «ՀՀ ցիկադակերպերի ֆաունան և էկոլոգիան»,
- «Գյուղատնտեսական և անտառային վնասատու երկթևանի որոշ ընտանիքների ուսումնասիրությունը Հայաստանում»:

ՊՈԱԿ-ի «Արևիք» մասնաճյուղի աշխատակիցների հետ համատեղ՝ ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի և Մոսկվայի բույսերի կարանտինի կենտրոնի մասնագետները, 3- օրյա այցի շրջանակում, իրականացրել են անտառպաթոլոգիական և միջատաբանական հետազոտություններ, կատարվել է նմուշառում՝ փշատերև ծառատեսակների շրջանում:

Տարվա ընթացքում մի քանի անգամ «Արևիք» ազգային պարկի տարածքում, ՊՈԱԿ-ի մասնագետի հետ համատեղ, «Բրդլինքս Հայաստան» ՀԿ-ի աշխատակիցների կողմից իրականացվել են թռչունների և սողունների մոնիթորինգ:

«Կաթնասունաբանների հայկական ասոցացիա» ՀԿ-ի գիտնականների խումբը «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի կողմից կառավարվող բնության հատուկ պահպանվող տարածքներում իրականացրել են կրծողների մշտադիտարկման աշխատանքներ:

«Կաթնասունաբանների հայկական ասոցացիա» ՀԿ-ի կողմից, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության և Կովկասի բնության հիմնադրամի համատեղ մշակված և վերջինիս դրամաշնորհով իրականացվող՝ կենսաբազմազանության մշտադիտարկման տասնամյա պլանով նախատեսված ցուցիչ տեսակների ուսումնասիրության աշնանային փուլի շրջանակներում՝ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի հատուկ պահպանվող տարածքներում գիտնականների խմբի կողմից իրականացվել են ուսումնասիրություններ:

ՇՄՆ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի հատուկ պահպանվող տարածքներում ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի, Միջատաբանության և բնահողի կենդանաբանության լաբորատորիայի մասնագետները իրականացրել են մշտադիտարկման և վնասակար միջատների նմուշառման աշխատանքներ: Ուսումնասիրությունները կատարվել են ներքոնշյալ ծրագրերի շրջանակում՝

- «Կովկասի բնության հիմնադրամի աջակցությամբ իրականացվող միջատների մոնիթորինգի ծրագիր»,
- «Հայաստանում պիստակենու և նշենու գյուղատնտեսական և վայրաճ տնկարկների անողնաշար վնասատուների ուսումնասիրություն»:

Աշնանային ամիսների ընթացքում ՇՄՆ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի անտառների և կենսաբազմազանության մոնիթորինգի ծառայության պետը և գլխավոր մասնագետը՝ ՊՈԱԿ-ի ԲՀՊՏ-ներում անտառների ազգային գույքագման իրականացման համար մշտական փորձահրապարակների տեղադրման աշխատանքների կատարման նպատակով, աշխատանքներ են իրականացրել «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ում: Իրականացվել է ցուցիչ, կարմիրգրքյան և այլ թիրախային տեսակների ուսումնասիրություններ և տվյալների հավաքագրում՝ ArcGIS Survey123 հավելվածով: Աշխատանքների ավարտից հետո ՊՈԱԿ-ի գրասենյակում տեղի է ունեցել հանդիպում, որի ընթացքում քննարկվել են հետագա համագործակցության նախադրյալները և մոնիթորինգի արդյունավետության բարձրացման հնարավորությունները:

2.2 Էկոտուրիզմի զարգացմանն ուղղված միջոցառումներ՝

ՊՈԱԿ-ի ԲՀՊ տարածքներում առկա երթուղիներով կազմակերպված գիտաճանաչողական արշավներ, զբոսաշրջային ծառայությունների մատուցում

Հաշվի առնելով զբոսաշրջային կազմակերպությունների ակտիվ գործունեությունը ինստագրամյան տիրույթում և տեղեկատվության առավել հասանելի աղբյուր ապահովելու նպատակով՝ ՊՈԱԿ-ի համար ստեղծվել է ինստագրամի երկլեզու պաշտոնական էջ:

Փետրվարի երկրորդ կեսին ձյան առատ տեղումներով պայմանավորված՝ ՊՈԱԿ-ի կողմից առցանց տիրույթում զգուշացվել է ձնահյուսերի հավանականության վերաբերյալ, որում մասնավորապես հորդորվել է զերծ մնալ ՇՄՆ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի հատուկ պահպանվող տարածքների լեռնային գոտիներում արշավներ կազմակերպելուց:

2.3 ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող էկոկրթական միջոցառումներ՝ հանրության իրազեկվածության և էկոլոգիական գիտակցության բարձրացման նպատակով.

Բնապահպանական մտածողության և էկոլոգիամետ վարքագծի ձևավորման նպատակով՝ 2025 թվականի ընթացքում կազմակերպվել են 27 էկոկրթական հանդիպումներ՝ Սյունիքի մարզի մի շարք կրթական հաստատություններում, մեծամասամբ մարզի սահմանամերձ համայնքների դպրոցներում: Իրականացվել է նաև 3 գիտաճանաչողական արշավ: Դասընթացներն իրականացվում էին տարբեր տարիքային խմբերի աշակերտների և ուսանողների համար՝ կրթական ծրագրին համապատասխան թեմաներով: Անց են կացվել «Կենսաբազմազանության պահպանություն», «Բնություն. անտառն ու մարդը», «Բնության հատուկ պահպանվող տարածքներ. ԶԿՀ տարածքները և կենսաբազմազանությունը», «Բնապահպանական աղետ. շրջակա միջավայրի աղտոտվածություն», «ՀՀ Կարմիր գիրք», «Սյունիքի ԲՀՊՏ-ների զբոսաշրջային ներուժը» թեմաներով դասընթացներ, իսկ վերջում ցուցադրվել են ԶԿՀ ԲՀՊ տարածքներում արված տեսանյութերը: Շեշտադրվել են շրջակա միջավայրի մաքրության պահպանության, ծառատունկերի իրականացման և հրդեհներից խուսափելու կարևորությունը, ինչպես նաև առօրյա կյանքում պլաստիկի օգտագործման նվազեցման հնարավոր տարբերակները: Միջոցառումների մասնակիցների ընդհանուր թիվը՝ 803:

Բնապահպանական միջոցառումներ

«Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ը կազմակերպել էր լիցքաթափված մարտկոցների հավաքման արշավ, որն ուղեկցվել էր իրազեկման միջոցառումներով՝ Շրջակա միջավայրի նախարարության կողմից իրականացվող վտանգավոր թափոնների ազդեցության մեղմմանն ուղղված միջոցառումների շրջանակներում: Արշավի արդյունքում, մոտ 17 կգ թափոն հանձնվել է նախարարությանը՝ հետագա պահման և վերամշակման գործընթացը կազմակերպելու նպատակով:

Զբոսաշրջություն

«Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի «Արևիք» ազգային պարկում ընթանում են զբոսաշրջային ենթակառուցվածքների բարեկարգման աշխատանքներ: Ազգային պարկի զբոսաշրջային հիմնական այցեքարտ հանդիսացող Լիճքի ջրվեժներ տանող արահետի վրա իրականացվել են

կամուրջների վերանորոգման, արահետի լայնացման և ցուցանակների թարմացման աշխատանքներ:

«Խուստուփ» արգելավայրի զբոսաշրջային ներուժի գնահատման և նոր զբոսաշրջային ենթակառուցվածքների ստեղծման հնարավորությունների ուսումնասիրման նպատակով՝ ՇՄՆ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի մասնագետների կողմից իրականացվել է շրջայց: Ուսումնասիրվել և գույքագրվել են նախատեսվող զբոսաշրջային արահետի կահավորման և ենթակառուցվածքների ստեղծման կարիքները:

Այցելուների իրազեկվածության բարձրացման նպատակով՝ ՊՈԱԿ-ի կողմից կառավարվող հատուկ պահպանվող տարածքներում՝ հիմնական զբոսաշրջային գրավչություններ տանող արահետների սկզբնամասերում տեղադրվել են տեղեկատվական և ուղղորդող ցուցանակներ:

Այցելուների իրազեկվածության բարձրացման նպատակով՝ ՊՈԱԿ-ի կողմից կառավարվող հատուկ պահպանվող տարածքներում՝ հիմնական զբոսաշրջային գրավչություններ տանող արահետների սկզբնամասերում տեղադրվել են տեղեկատվական և ուղղորդող ցուցանակներ:

Տարվա ընթացքում ԶԿՀ բնության հատուկ պահպանվող տարածքների համար տրվել է 287 անցագիր՝ 1978 այցելուի համար: Զբոսաշրջային ծառայություններից օգտվել է 1813 անձ, որի դիմաց վճարված ընդհանուր գումարը կազմել է 3,406,500 ՀՀ դրամ:

«Արևիք» ազգային պարկի տարածքով անցնող Տրանսկովկասյան արահետից օգտվել է 22 օտարերկյա զբոսաշրջիկ:

Համագործակցություն, հանդիպումներ, սեմինարներ

«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի «RESILAND. Հայաստանի դիմակայուն լանդշաֆտներ» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում՝ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ին նվիրաբերվել է 100 մեղվաընտանիք և խնամքն իրականացնելու համար անհրաժեշտ սարքավորումներ, ինչպես նաև, մասնագիտական հմտությունների զարգացման նպատակով, ՊՈԱԿ-ի աշխատակիցների համար իրականացվել է դասընթաց:

«Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրեն Արման Մկրտչյանը հյուրընկալել է ՀՀ Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանին, աշխատակազմի ներկայացուցիչներին և Կապան համայնքի ավագանու անդամներին: Ներկայացվել են կազմակերպության գործունեությունն ու կատարվող աշխատանքները, զբոսաշրջության և էկոկրթության ոլորտների ցուցանիշները, կենսաբազմազանության մոնիթորինգի արդյունքները, ինչպես նաև քննարկվել են զբոսաշրջության զարգացման հեռանկարները և ընթացիկ ծրագրերը:

ՊՈԱԿ-ի «Շիկահող» մասնաճյուղի մոնիթորինգի մասնագետը մասնակցել է «Վաղ գործողությունների աջակցություն՝ «Կենսաբազմազանության պահպանման գլոբալ շրջանակի» համատեքստում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կայացած աշխատաժողովին:

Տարվա ընթացքում ՊՈԱԿ-ը մասնակցել է Սյունիքի ռեգիոնալ կոմիտեի առցանց հանդիպումներին: ՊՈԱԿ-ը Սյունիքի ռեգիոնալ կոմիտեի անդամ է, որը նախաձեռնվել է AFRAT և CEPFA (ֆրանս- հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն հիմնադրամ) կազմակերպությունների կողմից՝ ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի, Ֆրանսիայի զարգացման գործակալության աջակցությամբ:

«Հայաստանի արահետներ» ծրագրի շրջանակներում նախատեսվող էկոտուրիստական գոտիների հիմնման նախագծով «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ը ներկայացրել է շարժական էկոկենտրոնի ստեղծման ծրագիր, որը կխթանի զբոսաշրջային հոսքի ավելացմանը:

ՇՄՆ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի մասնագետները մասնակցել են Սյունիք DMO-ում կայացած՝ Ֆրանսիայի AFRAT կազմակերպության էկոլոգիական կրթության մասնագետների հետ հանդիպմանը՝ էկոկրթական ծրագրերի արդյունավետության բարձրացման նպատակով: Հանդիպմանը մասնակցել են նաև Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնի, Սյունիք DMO-ի, Վիններթ Գորիս զարգացման հիմնադրամի ներկայացուցիչները, «Յագոդա մոյա» գլեմփինգի հիմնադիրը: Հանդիպման ընթացքում ՊՈԱԿ-ի աշխատակիցների կողմից ներկայացվել են կազմակերպության էկոկրթական ծրագրի շրջանակում արծածվող թեմաները, հանդիպումներին կիրառվող մեթոդաբանությունն ու գործիքակազմը, լսարանի սեգմենտավորման, ներգրավման փորձը և իրազեկման արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումները: Կամավորների կողմից կմշակվի նոր բովանդակություն՝ հետագայում էկոկրթական թեմաների շրջանակը ընդլայնելու նպատակով: Ծրագիրն իրականացվում է Ֆրանսիայի զարգացման գործակալության, ֆրանսիական տեղական ինքնակառավարման մարմինների աջակցությամբ, Ֆրանսիայի AFRAT և Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն (CEPFA) կազմակերպությունների կողմից իրականացվող՝ «Հայաստանի արահետներ» ծրագրի շրջանակներում:

ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ Արման Մկրտչյանը մասնակցել է Բնության համաշխարհային հիմնադրամի կողմից իրականացվող «Կենսաբազմազանություն և կայուն տեղական զարգացում Հայաստանում» ծրագրի՝ «Կենսաբազմազանության և բնության հատուկ պահպանվող տարածքներ» բաղադրիչի շրջանակում տեղի ունեցած «Ջերմուկ» և «Տաթև» ազգային պարկերի ստեղծման խորհրդակցական ժողովներին: Աշխատաժողովները միտված էին ազգային պարկերի ստեղծման գործընթացում առաջնահերթ լուծում պահանջող գործողությունների ներկայացմանը՝ սահմանների ձևավորման, արդյունավետ կառավարման գործիքակազմի մշակման, ինչպես նաև ազգային պարկերի հարակից համայնքների սոցիալ-տնտեսական կայուն զարգացման ու զբոսաշրջության խթանմանն ուղղված մեթոդաբանությունը:

«Կենսաբազմազանություն և կայուն տեղական զարգացում Հայաստանում» ծրագրի՝ «Կենսաբազմազանության և բնության հատուկ պահպանվող տարածքներ» բաղադրիչի շրջանակում, Բնության համաշխարհային հիմնադրամի և «Պրոպարկ» ընկերության միջև կնքված պայմանագրով, ս/ թ նոյեմբերի 24-ին և 25-ին ՊՈԱԿ-ի «Արևիք» և «Շիկահող» մասնաճյուղերի աշխատակիցները մասնակցել են Կապանում կայացած հանդիպումներին, որոնք միտված էին աշխատակիցների կարողությունների գնահատմանը:

Կենսաբազմազանության վերաբերյալ Կոնվենցիայի (CBD) շրջանակներում կազմակերպված տարածաշրջանային երկխոսության ընթացքում տեղի ունեցած ցուցահանդեսին իր մասնակցությունն է ունեցել նաև ՇՄՆ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ը՝ ներկայացնելով կազմակերպության կառավարման ներքո գտնվող բնության հատուկ պահպանվող տարածքների առանձնահատկություններն ու զբոսաշրջային ներուժը, հարուստ

կենսաբազմազանությունը, ինչպես նաև ՊՈԱԿ-ի կողմից առաջարկվող արտադրանքը:

ՊՈԱԿ-ի տնօրեն Արման Մկրտչյանը մասնակցել է «Ճանապարհ դեպի COP17» նախաձեռնությանը, որն իրականացվել է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության և ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոնի կողմից՝ Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի (CBD) հետ համագործակցությամբ: Միջոցառման նպատակը Հայաստանի բնապահպանական քաղաքականության և միջազգային հանձնառությունների իրականացման նոր և կարևոր փուլի մեկնարկն էր:

«Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ը կազմակերպել էր լիցքաթափված մարտկոցների հավաքման արշավ, որն ուղեկցվել էր իրազեկման միջոցառումներով՝ Շրջակա միջավայրի նախարարության կողմից իրականացվող վտանգավոր թափոնների ազդեցության մեղմմանն ուղղված միջոցառումների շրջանակներում: Արշավի արդյունքում, մոտ 17 կգ թափոն հանձնվել է նախարարությանը՝ հետագա պահման և վերամշակման գործընթացը կազմակերպելու նպատակով:

Երիտասարդության միջազգային օրը ՇՄՆ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ը մասնակցել է Կապան համայնքում անցկացվող ամենամյա «Երիտասարդական փառատոն-8848»-ին: Հաշվի առնելով, որ փառատոնը մարզային երիտասարդության շրջանում իրազեկվածության բարձրացման լավագույն հարթակներից է, այս տարի ՊՈԱԿ-ի տաղավարը նվիրված էր 2026 թվականին Հայաստանում կայանալիք COP17՝ ՄԱԿ-ի Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի Կողմերի համաժողովին, ինչպես նաև ներկայացվել է «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի գործունեությունը՝ բույսերի և կենդանիների մշտադիտարկում, էկոզբոսաշրջային հոսքի կառավարում և էկոկրթական ծրագրեր:

ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ Արման Մկրտչյանը մասնակցել է Բնության համաշխարհային հիմնադրամի կողմից իրականացվող «Կենսաբազմազանություն և կայուն տեղական զարգացում Հայաստանում» ծրագրի՝ «Կենսաբազմազանության և բնության հատուկ պահպանվող տարածքներ» բաղադրիչի շրջանակներում կազմակերպված աշխատանքային հանդիպմանը: Հանդիպման նպատակն էր ներկայացնել SMART համակարգը և դրա կիրառման սկզբունքները Հայաստանում:

Հանրության առցանց իրազեկում

Շրջակա միջավայրի և բնապահպանի օրվա կապակցությամբ նկարահանվել է «Բնապահպանը՝ ես եմ» տեսաֆիլմը, որի նպատակն է շեշտադրել, որ մեզնից յուրաքանչյուրն՝ անկախ մասնագիտական կողմնորոշումից, կարող է լինել բնապահպան:

Զբոսաշրջային հոսքի կտրուկ աճով պայմանավորված՝ արվել են նախազգուշացնող և իրազեկող հրապարակումներ՝ հատուկ պահպանվող տարածքներում վարքագծի և անվտանգության վերաբերյալ:

Տարվա ընթացքում ՊՈԱԿ-ի ֆեյսբուքյան և ինստագրամյան պաշտոնական էջերում տեղադրվել են տեղեկատվական նյութեր՝ ԲՀՊՏ-ներում արված կենդանատեսակների և բուսատեսակների լուսանկարներ ու տեսանյութեր, ՊՈԱԿ-ի

զբոսաշրջային գրավչությունների վերաբերյալ հրապարակումներ, լուսաբանվել են ամսվա ընթացքում հանրայնացման ենթակա աշխատանքները:

Բնության հատուկ պահպանվող տարածքների օրվա կապակցությամբ «Շիկահող» պետական արգելոցում «Սյունիք» ՀԸ կողմից նկարահանվել է ռեպորտաժ:

Տեղեկատվական խողովակների ընդլայնման, կազմակերպության գործունեությունը հանրությանն առավել հասանելի դարձնելու նպատակով տեղի է ունեցել հանդիպում infokapan.am կայքի հիմնադիրի հետ: Քննարկվել են համագործակցության հնարավորությունները, ինչպես նաև կայքում ՊՈԱԿ-ի գործունեության վերաբերյալ տեղեկատվության ներկայացման գործընթացը: Տարեվերջին կայքում զետեղվել է ՊՈԱԿ-ի գործունեությանն առնչվող տեղեկատվությունը:

Եղանակային պայմաններից ելնելով՝ «Զանգեզուր» արգելավայրի Ծաղկարի (Ծակքարի) լճի հայելին՝ ցածր ջերմաստիճանով պայմանավորված սառցակալել է, արշավականների և զբոսաշրջային կազմակերպությունների իրազեկման նպատակով տարածվել է հաղորդագրություն, որով, մասնավորապես, հորդորվել է խստագույնս պահպանել անվտանգության կանոնները, լիճը չդիտարկել որպես սահադաշտ և չխախտել լճի էկոհամակարգի հավասարակշռությունը:

Մաքրման աշխատանքներ

«Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի աշխատակիցների կողմից պարբերաբար իրականացվել են մաքրման և խնամքի աշխատանքներ:

Համապետական շաբաթօրյակի շրջանակում «Սոսու պուրակ» արգելավայրում և տնկարանում և «Շիկահող» մասնաճյուղի վարչական շենքի հարակից տարածքում իրականացվել են մաքրման աշխատանքներ:

Տեխնիկական աշխատանքներ

Տարվա ընթացքում իրականացվել են առցանց տեսահսկման համակարգերի սպասարկման և վերանորոգման աշխատանքներ: Համակարգերի կողմից պարբերաբար արձանագրվել են մի շարք կենդանատեսակներ, այդ թվում՝ Բեզարյան այծ, Գորշ արջ, Գայլ, Վայրի խոզ, Եվրոպական այծյամ, Սովորական աղվես, Եվրոպական լուսան և այլն:

<<Սոսու պուրակ>> պետական արգելավայր

«Զանգեզուր կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի «Սոսու պուրակ» արգելավայրի տնկարանից ՀՀ ՊՆ N զորամասին նվիրաբերվել են 80 հատ կատալպա, 20 հատ արևելյան սոսի, 155 հատ բարդի:

Տնկարանից վաճառվել է 238 հատ Արևելյան սոսու և 21 Կատալպայի տնկի, որի դիմաց վճարված գումարը կազմել է 1 099 000 ՀՀ դրամ:

«Զանգեզուր» Կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ

Տնօրենի ժ/պ՝ Ա. Մկրտչյան